ՆՈՐ-ԴԱՐ

№ 199 ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 9 Նոյեմբերի **1896** Շաբաթ 9 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 199

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., համար 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis Rédaction „Nor-Dar".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների տողին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրականական ամենօրեայ լրագիրը առաջիկայ **1897**-ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից:

Տարւայ ընթացքում «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի առնուազն 220—225 համար:

«Նոր-Դար»-ը ստանում է սեփական հեռագրեր և ունի նշանաւոր կեդրոններում յատուկ թղթակիցներ:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի: Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատավ դուրս՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.:

ԵՒՐՈՊԱՅԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլլար:

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն:

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում միմիայն «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը:

Խմբագրատունը գտնւում է Լօրիս-Մելիքեան փողոցում, պոստ-հեռագրատան մօտ:

Օտար քաղաքներից բաժանորդ գրւողները դիմում են խմբագրութեանս այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ" կամ (Caucase, rédaction du journal «Nor Dar».

Եթէ բաժանորդների թիւը սովորականից աւելանայ, «Նոր-Դար»-ը լոյս կը տեսնի շաբաթը վ ե ց ա ն գ ա մ. յանձնյան դէպս բոլոր հայ թերթերից «Նոր-Դար»-ն աւելի համարներ կըտայ իր բաժանորդներին ինչպէս մինչև օրս:

Խմբագրութիւնս իր ջանքը չի խնայիլ թերթի բովանդակութիւնը ճոխացնելու՝ ընտիր նիւթերով և հետաքրքրելի դարձնելու կարևոր տեղեկութիւններով:

Խմբագրութիւնս կունենայ ի միջի այլոց և եւրոպական նշանաւոր կեդրոններից յատուկ թղթակիցներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատրիարքական ընտրութիւն:
Լորդ Սոլզբըրու ճառը:
Թրքական գործեր:
Քրոնիկոն.—Վեհափառի ճանապարհորդութիւնը: Գէորգեանի սպանութեան գործը: Կանանց բժշկական ճեմարան: Տ. Միրաքեանցի նամակը: Հնութիւններ: Պ.Հ.Բ.Ը. ընդհանուր ժողով: Եղանակը Թիֆլիսում և փառելափոյս: Նոր մաքս:
Էլի մի նոր դէպք Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան մէջ:
Նամակ խմբագրութեան:
Մամուլի շուրջը:
Գեղարուեստ և գրականութիւն:
Թ ղ թ ա կ ց ու թ ի ւ ն. — Նամակ Պարսկաստանից.—Մարաղա:
Ք ա ղ ա ք ա կ ա ն. Գերմանիա:
Հ ե ռ ա գ ր ե ր:
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն. Գրականական ակնարկներ:
Յ ա յ տ ա ր ա ր ու թ ի ւ ն ն ե ր:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

«Ռուս. վեդ.»-ը հեռագրում է, որ Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրուել է Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանը:

ՄԱՐՔԻԶ ՍՈԼԶԲԸՐՈՒ ՃԱՌԸ

Առաջ ենք բերում մարքիզ Սոլզբըրու Լոնդոնի լորդ-մէրի բանկետի ժամանակ խօսած ճառի մանրամասնութիւնները:

«Մենք,—ասաց նա,—արտաքին գործերի մինիստրութեան մէջ մի անհանգիստ շրջան անցրինք, որին, բարեբաղդաբար, հետևեց մի ուրիշ աւելի մխիթարական շրջան: Դժբաղդաբար, Թրքական խնդիրը առաջւայ պէս ամենամեծ մտահոգութիւնն է պատճառում եւրոպական իւրաքանչիւր կառավարութեան: Լորդ-մէրն իր ճառի մէջ հարցրեց. թէ Անգլիան ինչպիսի յարաբերութիւնների մէջ է միւս պետութիւնների նկատմամբ: Անհասկանալի է, որ անգլիական ազգը խիստ յուզուած էր: Մի քանի—և դրանց մէջ խիստ ազդեցիկ—ձայներ պահանջում էին Անգլիայի միակողմանի գործողութեան օգտին արևելեան խնդրում: Գոհութեամբ պիտի յայտարարեմ, որ ներկայումս անգլիական ազգն այս մասին միակերպ է մտածում: Ինձ յայտնի չէ, որ հասարակաց կարծիքի փոքր ի շատէ նշանաւոր մասը Անգլիայի առանձնակի գործողութեան կողմը լինի այժմ: Այս խնդրում մեր ժողովուրդը մեծ խոհեմութիւն և կարողութիւն ցոյց տուեց գործերի մասին դատելու, որովհետև հայերի օգտին առանձնակի գործողութիւնը բոլոր միջոցներից ամենավատը պէտք է համարել: Թուրքայ վարչութիւնից տանջւում են ինչպէս քրիստոնեաները, այնպէս և մահմեդականները, և նրանց օգնել հնարաւոր է միայն կարելոյն չափ մեծ թւով պետութիւնների միաբան աջակցութեամբ: Մի տիկին հարցնում էր ինձ, թէ ինչու բրիտանական նաւատորմիղը չի անցնիլ Եփրատից մինչև Վանայ լիճը: Բայց դա տիկին էր, և նրա սխալուելը հասկանալի է: Դժբաղդաբար, կան արմարդիկ, որ այս խնդրում նրանից լաւ չեն դատում (լ ս ե ց է ք):

«Բրիտանական նաւատորմիղն ամենևին կարող չէ Թիւրքիայի նկատմամբ Անգլիայի առանձնակի գործողութեան մասին խօսելու համար, պէտք է մտածել զինուորական գրաւման մասին:

«Բայց զինուորական գրաւումը խիստ պատասխանատու մի ձեռնարկութիւն է, որ զինուորական նշանաւոր չափով ոյժեր է պահանջում: Աշխարհիս ոչ մի նաւատորմիղ չի կարող լողալ Հայաստանի լեռների տակ և հովանաւորել նրա բնակիչներին: Պ. Կուրտնէյը մեծ խոհեմութեամբ էր խօսում այն պատճառների մասին, որոնց զօրութեամբ Անգլիան ոյժ չունի հայերին օգնելու: Իմ կարծիքով, եթէ զինուորական գրաւումն անհրաժեշտ է, այն ժամանակ հարկաւոր կլինէինք ընդհանուր զինուորական ծառայութիւն մացնելու. քանի որ այդ չկայ—անմտութիւն է մեր թուլութեան մասին խօսելը: Առանց զօրքի, այդպիսի ձեռնարկութիւնները գլուխ չեն գայ:

«Չարիքը վերացնելու համար մի միջոց է մնում—եւրոպական կոնցերտը, եւրոպական համաձայնութիւնը: Եթէ եւրոպական պետութիւնները կըցանկանան գործել, նրանք կարող են կատարել իրենց ցանկութիւնը, որովհետև հարկաւոր միջոցներն ունին:

«Բայց եթէ դուք առանձնակի միջամտութեան կողմը լինէք, իսկ մեծ պետութիւններն ընդդիմադրին դրան, այն ժամանակ Մեծ Բրիտանիան եւրոպական պատերազմի բոլոր սարսափները յարուցանելու վտանգի մէջ կըլինէր: Բայց ինչ բան է եւրոպական կոնցերտը: Դա այն է նշանակում արդեօք, թէ մեծ պետութիւնների բոլոր բանակները առաջ կըշարժուեն Downing-street-ի մէջ գործերը վարող մինիստրի խօսքով: Ոչ, դա այն է նշանակում միայն, որ բոլոր վեց մեծ պետութիւնները գործում են միակերպ: Ոչ մի պետութիւն չի կարող իր veto-ն դնել, հակառակ դիպուածում կոնցերտը դադարում է գոյութիւն ունենալուց: Միստր Մօրլէյը առաջարկում է, որ եթէ մենք մեծ պետութիւններին չենք ստիպել խառնուելու թրքական գործերի մէջ և Թիւրքիայում լաւ կառավարութիւն սահմանելու, այն ժամանակ Անգլիան կըխայտառակուի: Բայց այստեղ ինչ մի նուաստացուցիչ բան կայ մեզ համար, եթէ մենք չենք կարող համոզել ուրիշներին: Ես կարծում եմ, որ, միւսների հետ միաբանութեամբ գործելով, մենք աւելի լաւ կարող ենք պաշտպանել մեր շահերը: Այս դէպքում պատասխանատւութիւնից բաժին է ընկնում ամենքին:

«Ասում են, թէ պետութիւնները գործում են իրենց սեպհական եսասիրական շահերի օգտին: Ես չեմ կարող ընդունել այդպիսի մեղադրանքը: Եսասիրական քաղաքականութիւն այն ժամանակ կըլինէր, երբ մենք հրաժարուէինք գնալու այն ճանապարհով, որը միայն կարող է եւրոպական պատերազմի առաջն առնել: Այդ պատերազմը կործանիչ ազդեցութիւն կունենայ մեր առևտրական և քաղաքական շահերի վրայ: Բայց մեր կառավարութեան նպատակը Մեծ Բրիտանիայի գլխին մի այդպիսի աղէտ բերելու մէջ չի կայանում, մի աղէտ, որը սպառնում է վտանգաւոր հետևանքներ առաջ բերել եւրոպական մի քանի ազգերի համար: Հաւատացէք, որ այն պետութիւնները, որոնք չեն գտնւում մեր փառաւոր առանձնակի (splendid isolation) դրութեան մէջ, չեն ղեկավարուիլ մեր մարդասիրական հայեացքներով: (Ծափահարութիւններ): Մի խօսքով մենք պէտք է գործենք միւս պետութիւնների հետ միասին, թէկուզ մինչև անգամ թրքական կնճռի վերջնական լուծումը երկար ժամանակով ուշանայ:

(Վերջը միւս անգամ)

ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Բալֆուրի ճառը: «Ռուս. վեդ.»-ը Լոնդոնից, նոյեմբերի 6-ից հեռագրում է. «Թոչղլասում իր արտասանած ճառի մէջ Բալֆուրն ասաց, որ եթէ հնարաւոր լինի որևէ բան անելու հայերի համար, այդ բանը պիտի անուի ոչ այլ կերպ, քան եթէ ամբողջ Եւրոպայի միջոցով. սակայն, միւս կողմից դժուար է, որ վեց մեծ պետութիւնները միասին գործեն, որովհետև նրանցից ամեն մէկը կասկածանքով է վերաբերւում միւսներին: Ամենամեծ արգելքներից մէկը պիտի համարել Անգլիայում եղած կասկածանքը: Ամբողջ աշխարհի համար մի դժբաղդութիւն էր, որ Անգլիայի ցանկութիւններին արտասահմանում արտայօք բացատրութիւն տուին: Ի նկատի ունենալով նրա այժմեան պարտաւորութիւններն ու նպատակները, Անգլիան չի կարող, հակառակ Եւրոպայի ցանկութեան, խաչակրաց արշաւանք սկսել, որը հայերին ոչ մի օգուտ չէր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ա.

Անցեալ շաբաթ օրը մենք խոստացել էինք շարունակել մեր խօսքը Մաքս Նորդաուի «Այլասեռութիւն» գրքի մասին և ցոյց տալ թէ ինչ ճանապարհով հեղինակը հասնում է այն եզրակացութեան, թէ եւրոպական հասարակութիւնը այլասեռւում է:

Տեսէք ինչն է տիրապետում գրականական ասպարէզի վրայ, ո՛ր տեսակի գրուածքներ, ինչպիսի հեղինակներ: Ամեն ինչ ցոյց է տալիս, որ արդի գրականութիւնը հիւանդ է և չարաչար հիւանդ. ուրեմն հիւանդ է և այն հասարակութիւնը, որ արտադրում է այդպիսի գրականութիւն և բաւականութիւն է գտնում նրա մէջ:

Միստիկականութիւնը այժմ ամենատարածուած ուսմունքն է. ամեն ինչ և՛ գրականութիւն և՛ գեղարուեստ նրանով խմորուած է և նրա վրայ հաստատուած. պակաս տեղ չի բռնում և անբարոյական հակումը, պոռնոգրաֆիան, որի համար պատկերներն ու վէպերը ամենալաւ միջոցներն են համարւում, «եսասիրութիւնը» (էգօիզմ), եսապաշտութեան սանձարձակ քարոզը և այլն:

Ի՞նչ է օրինակ միստիկականութիւնը. Նորդաուն ասում է, որ դա հոգու այնպիսի դրութիւնն է, երբ մարդ երևակայում է, թէ ինքը կարող է ըմբռնել կամ հասկանալ զանազան երևոյթների անհասկանալի և անյայտ յարաբերութիւնները, տեսնել առարկաների մէջ զանազան գաղտնիքներ:

Միստիկը ոչ մի բան կանոնաւոր (նորմալ) մարդու նման չի կարողանում ըմբռնել. նա կատարեալ հիւանդ է և մտքով և հոգով: Նախ և առաջ պակաս է նրանց ուշադրութիւնը, որի պատճառով նրանք չեն կարողանում կարգի բերել իրենց մտապատկերները և պատրութիւնները: Եւ ինչպէս որ մութ ու անկապ են նրա արտայայտած մտքերը, այդպէս էլ անորոշ է և նրա լեզուն, խօսակցութիւնը: Ուղեղի գործունէութիւնը անկանոն լինելուն պատճառով, անկանոն է և նրա երևակայութիւնը, որ մերթ բոցբոցւում է, մերթ հանգչում, մերթ կայծակներ արձակում, մերթ ջրի նման փւում: Բժիշկները կարծում են, որ դա այլասեռութեան հետևանք է. օրինակ գիտնական Լէգրէն այսպէս է ասում. «Միստիկական մտքերը այլասեռուող անհատի զառանցանքների հետևանք են: Նրանք նկատելի են լինում երկու հիւանդութիւնների ժամանակ՝ ընկնաւորների և իսթերիկականների ցնորաբանութեան ժամանակ»:

Այս տեսակ հիւանդների մէջ կան և բոլորովին ապուշներ, կան և այնպիսիները, որոնք չնայած իրենց հոգեկան հիւանդութեանը, կարող են սրամիտ և խորիմաստ մարդու տպաւորութիւն թող նել:

Բ.

Ահա այդպիսիներն են, որ իջել են գեղարուեստական և գրականական ասպարէզ, դրանցից է կազմուած, Նորդաուի ասելով, օրինակի համար «պրէ-ռաֆայէլիտների» նկարչական դպրոցը: Նրանց ճաշակը բթացել է, ուստի նրանք չեն ընդունում Ռաֆայէլին իբրև հանճար և հետևում են նրանից առաջ եղած միջնադարեան նկարիչներին: Պատկերի տեխնիկան—արտաքին ձևը նրանց համար նշանակութիւն չունի, գլխաւորը բովանդակութիւնը, սիւժէտն է: Իսկ նրանց սիւժէտների մէջ առաջին տեղն են բռնում կրօնական երևոյթները և այն ամենը, ինչ որ մութն է, անորոշ, ինչ որ դուրս է ժամանակից ու տարածութիւնից: «Պրէռաֆայէլեան եղբայրութիւնը» կազմում են Դ. Գաբրիէլ Ռոսսէտի, Գոլմանդէնտ և Մելէս, որոնք միևնոյն ժամանակ և բանաստեղծներ են: Իբրև բանաստեղծ գրում են այնպիսի տարօրինակ ձևով և ոճով, որ առողջ մարդը հազիւ թէ մի բան հասկանայ: Օրինակ ինչ կըհասկացուի հետևեալ տողերից՝ «Մենք տասը աղջիկ էինք կանաչ դաշտում մէջ. փոքրիկ կարմիր տերևներ ջրաղացի ջրի մէջ: Մեզանից աւելի գեղեցիկ աղջիկներ երբէք չեն ծնուել. ոսկի խնձորներ թագաւորի աղջկայ համար: Մենք տասը աղջիկ էինք խոխոջող աղբրի մօտ,—փոքրիկ սպիտակ թռչուններ ջրաղացի ջրի մէջ. աւելի քաղցրահամբոյր հարսներ երբէք չեն եղել. կարմիր մատանիներ—թագաւորի աղջկայ համար»: Սա Սվինբէրնի, Ռոսսէտիի հետևողի բանաստեղծութեան առաջին տունն է. բանաստեղծութիւնը «Թագաւորի աղջիկ» է կոչւում: Թէ ինչպիսի բարոյական գաղափարներ ունի այդ բանաստեղծը, երևում է նրա հետևեալ բանաստեղծական հատուածից «Ամօթխածութեան մասին ես հարցնում եմ թէ ինչ է նա, իսկ առաքինութեան մասին ասում եմ, որ պէտք չի նա մեղմ. մեղքի մասին,—մենք նրան կըհամբուրենք, որովհետև նա մեղք չէ»:

Այդպիսի զառանցանքների մէջ ընկնողը, այդպիսի անկապ և կամ բարոյական հիմունքից զուրկ մտքեր, ասում է Նորդաուն, կարող են միմիայն ապուշները, հոգեկան հիւանդները, այսինքն այլասեռուողները արտայայտել:

Գ.

Այժմ խօսենք «սիմվոլիստներ»-ի մասին. բայց առաջ տեսնենք ինչ բան է սիմվոլիզմ, սիմվոլիստ: Մ. Նորդաուն դժուարանում է ինքը բացատրել այդ խօսքերի իմաստը, որովհետև, ասում է նա, դա խանգարուած ուղեղի և երևակայութեան հնարած խօսքեր են, որոնց իմաստն առողջ մարդը չի կարող հասկանալ: Սակայն իրենց—սիմվոլիստների ասելով սիմվոլն այն առարկաների խառնուրդն է, որ արթնացրել է մեր զգացմունքները և մեր հոգու մէջ երևութական մի բան է ստեղծել: Իբրև միջոց գործ է ածւում ներշնչումը, իսկ նպատակն է մարդու մէջ առաջ բերել այն

բերել, իսկ Անգլիայի վրայ ծնշող պատասխանատուութիւն կըդնէր»։

—

Հանոտոյի ճառի ազդեցութիւնը։ «Journal des Débats»-ի ասելով, սուլթանը, Հանոտոյի յայտնի ճառը կարդալուց յետոյ, իւր մօտ էր հրաւիրել ֆրանսիական դեսպան Կամբոնին և երեք ժամ խորհրդակցել էր նրա հետ։ Այդ խորհրդակցութիւնից յետոյ վճռուած էր արձակել արտակարգ դատարանը։ Բոլոր վալիներին (նահանգապետներին) հեռագիր էր ուղարկուած, որով նրանք պատասխանատու են համարւում ամեն մի նոր արիւնհեղութեան համար։

—

Պետութիւնների համաձայնութիւնը։ Հակառակ անգլիական թերթերի հաղորդած այն լուրերին, թէ պետութիւնների մէջն կատարեալ համաձայնութիւն է կայացել արևելեան խնդրի մասին, «Nord»-ն ասում է, որ այդ համաձայնութիւնն այնքան էլ կատարեալ չէ, որովհետև Անգլիան խանգարում է այդ համաձայնութեան գլուխ գալուն, զանազան արգելքներ դնելով նրա առաջ։

—

Թիւրքիան և պետութիւնները։ Կ. Պոլսից, նոյեմբ. 1-ից հեռագրում են. «Թէև ասում են, որ իտալական դեսպան Պանզայի Հռոմ է մեկնել ընտանեկան հանգամանքների պատճառով, սակայն այստեղ կարծում են, թէ կառավարութիւնն է նրան Հռոմ կոչել, որովհետև նա կամենում է իւր դեսպանի հետ խորհրդակցել այն բանակցութիւնների մասին, որոնք տեղի են ունեցել պետութիւնների մէջն Թիւրքիայում ռեֆորմներ մտցնելու անհրաժեշտութեան հիաբերմամբ։ Հաւատացնում են, որ Նելիդովի և ապա Պանզայի մեկնումը նկատելի տպաւորութիւն է թողել Ելդըզ-Քեօշկում։ Այստեղ քիչ նշանակութիւն են տալիս երէկ լրագրերում հրատարակուած մի ծանուցման, որ վերաբերում է երեք դեսպանների Թիւրքիայում գործադրելու համար անցեալ տարի մշակած ռեֆորմներին»։

—

Աւստրիան և Թրքական խոստումները։ «Kölnische Zeitnug»-ի Վեննայի թղթակիցը հաղորդում է, թէ աւստրիական քաղաքական շրջաններում թերահաւատութեամբ են վերաբերւում այն վերջին խոստումներին, որ սուլթանը տուել է ֆրանսիական դեսպան Կամբոնին։ Աւելի հաւատ են ներշնչում այն լուրերը, որոնք վերաբերւում են օսմանեան պարտքի վարչութեան մէջ (Dette publique) առաջիկայում մի պատուիրակ նշանակելուն, բայց յայտնի չէ, թէ Թիւրքիային կաջողուի արդեօք արտաքին նոր փոխառութիւն անելը։

—

Բանտերը, ոստիկանութիւնը։ «Ագեանսի Լիտտակ» ի Կ. Պոլսի թղթակցի ասելով, ոստիկանութեան նոր մինիստր Ձեֆիկ բէյը զբաղւում է Կ. Պոլսի ոստիկանութեան վերակազմութեամբ։ Բացի դրանից, նա ծրագիր է մշակում բարեկարգելու մայրաքաղաքի բոլոր բանտերը։ Այդ բանտերը լիքն են կալանաւորներով, որոնք բանտերի առողջապահական խիստ վատ պայմանների շնորհիւ հիւանդանում են խմբերով և մեռնում։ Ձեֆիկ-բէյի ծրագրով, Ստամբոլում նոր բանտ կըշինուի, որովհետև եղածները բաւարարութիւն չեն տալիս, և կալանաւորներից շատերը տեղաւորուած են խաներում։ Էնվեր բէյը, որ արդարադատութեան մինիստրութեան մէջ նշանաւոր իրաւաբան է, օգնում է Ձեֆիկ-բէյին ծրագրերի մշակման մէջ։

Անատոլիայի գաւառների գլխաւոր տեսուչ Շաքիր-փաշան յաճախ Բ. Դրան ուշադրութիւնն էր հրաւիրել այն բանի վրայ, թէ անհրաժեշտ է այդ գաւառների ոստիկանութիւնը վերակազմել։ Նրա կարծիքով, բաւական չէ, որ ոստիկանների այժմեան թիւն աւելացուի, անհրաժեշտ է հիմնովին փոխել ոստիկանական այժմեան ռեժիմը։ Մինիստրների խորհուրդն այս օրերս հաւանութիւն է տուել Շաքիր փաշայի պահանջներին։ Սպասւում է միայն սուլթանի իրադէն։

Իսկ փո՞ղ։

—

Գլադստոնը և քաղաքականութիւնը։ Շոտլանդացի մի հրապարակագիր Գլադստոնին մի նամակ էր ուղարկել, որի մէջ ցանկութիւն էր յայտնել, որ ազատամիտ կուսակցութիւնը շուտով իւր նոր պարագլուխն ընտրի և, վերջապէս, իւր արևելեան քաղաքականութեան կատարեալ պէս որոշ ծրագիրը մշակի։ Այս նամակին Գլադստոնը պատասխանել է.

«Ստացայ ձեր նամակը, բայց ես այժմ ոչ մի մասնակցութիւն չունիմ ընդհանուր քաղաքականութեան մէջ և շատ պատճառներով, նմանապէս նրա համար, որ Անգլիան իւր որոշ աւանդականութիւնն ունի, ես զրկուած եմ այդ քաղաքականութեանը վերաբերող մեծ խնդիրների մասին դատողութիւններ տալու հնարաւորութիւնից։

«Եթէ մի մարդ հեռանում է քաղաքական բեմից այնպէս, ինչպէս ես, պաշտօնապէս, հասարակութիւնը պահանջում է, որ նա հեռանայ իրապէս և ոչ թէ առերեւոյթ»։

—

Ձերբակալութիւններ և մահուան պատիժներ։ «Ռուս. գործ.» ասելով Ֆիլիպպոպոլսում Կ.Պոլսից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ նորից շատ մահմեդականներ են ձերբակալուած։ Հայերին դատելու համար հիմնուած առանձին դատարանը Խաս-գիւղի հայ քարոզիչ եպիսկոպոսին մահուան պատժի է դատապարտել։ Վճռաբեկ ատեանը հաստատել է Բիթլիսի եպիսկոպոսի մահուան պատժի դատավճիռը։

—

Դարձեալ Բուլղարիա փախած հայերի մասին խօսելով, լրագրերը հաղորդում են, որ ներկայումս նրանց թիւն այնտեղ հասնում է 12,000-ի։ Նրանց մի մասը գործ է ճարել, բայց մեծ մասը սաստիկ աղքատութեան մէջ է։ Հայ փախստականներին Բուլղարիայի մէջ որոշ բնակավայր յատկացնելու համար արդէն ծրագիր է կազմուած և ստորագրութեամբ փող է հաւաքւում։ Հաւանական են համարում, որ նպաստներ ստացւում են նաև Միացեալ Նահանգներից։ Այնտեղ հայերի օգտին բացուած հանգանակութիւնն աջողութեամբ առաջ է գնում։ Ամերիկական նպաստամատոյց յանձնաժողովն արդէն ստացել է 776,700 դոլար։

—

Չարլզ Դիլկի ճառը։ Էնֆիլդում, ազատամիտների կլուբում, Չարլզ Դիլկն իւր արտասանած ճառի մէջ ասաց.

«Ֆրանսիան, Ռուսիան և Անգլիան, որոնք ստեղծեցին Յունաստանի անկախութիւնը, կարող էին ընդհանուր համաձայնութեամբ լիազօրութիւն տալ նրան Կիպրոսին տիրելու, եթէ սուլթանի խոստացած ռեֆորմները չիրագործուէին։

«Միւս կղզիները նոյնպէս կարելի է Յունաստանին տալ, իսկ Կրետէն ընդհանուր պաշտպման ենթարկել։

«Եգիպտոսի գրաւումը Անգլիայի համար ոչ թէ միայն զինուորական թուլութեան աղբիւր է, այլ և, բացի դրանից, արգելք է լինում նրան միասին գործելու Ֆրանսիայի հետ որևէ խնդրում։ Բայց փոխանակ մեր պարտաւորութիւնները կատարելու, մենք պատրաստւում ենք արշաւանքի գնալու Խարտում և կարծես թէ դիտմամբ քըշացնում ենք Ֆրանսիայի և Ռուսիայի հետ արևելեան խնդրում համաձայնութիւն կայացնելու հնարաւորութիւնը։ Ի հարկէ այնպիսի ճառերը, որպիսին մօտերքս խօսեցին մի քանի հռետորներ, չեն կարող այդ հնարաւորութիւնն աւելացնել։ Դեռ լաւ է, որ լորդ Սոլսբըրին զգալից իրեն և այնպիսի բան չասաց, որը կարող լինէր վատացնել դրութիւնը»։

—

Ծիծաղը լորդ Սոլսբըրու ճառի մէջ։ Անգլիական թերթերից մէկը ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ լորդ Սոլսբըրու ճառի մասին լըրագրերում տպուած հաշուի մէջ ծիծաղ բառը կրկնւում է 15 անգամ, և որովհետև ճառը տևել է 40 րոպէ, ուրեմն յարգելի լորդի ունկնդիրները ծիծաղել են իւրաքանչիւր $2^1/_2$ րոպէից յետոյ։

«Daily Chronicle»-ն այս առթիւ նըկատում է, թէ արդէն ծիծաղի այդ առատութիւնը ցոյց է տալիս, որ լորդ Սոլսբըրին շատ թեթև կերպով է վերաբերուել հայկական հրատապ խնդրին։

—

Հասարակ պատահականութիւն։ «Նովոստի» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են թէ հասարակ պատահականութիւն է համարւում այն արձակուրդը, որ առել են բոլոր դեսպանները միասին, բացի ֆրանսիական դեսպանից։

—

Կրետէ կղզու բնակիչները դժգոհ են, որ դատարաններն իրենց աշխատանքները վերսկսել են հին հիմունքների վրայ։

—

Անգլիան մեղաւոր։ «Nord»-ի մէջ տըպագրուած է. «Այն լաւատեսութիւնը, որ ցոյց տուեց լորդ Սոլսբըրին Գիլդհոլում իւր արտասանած ճառի մէջ, մեզ մի փոքր չափազանցուած է երևում։ Ինչքան էլ որ լորդ Սոլսբըրին պնդի, թէ Ռուսիայի և Անգլիայի մէջև ոչ մի տարաձայնութիւն չկայ, այնուամենայնիւ տխուր իրականութիւնը աչքի է ընկնում և, արդէն միւս խնդիրների մասին չխօսելով, միայն արևելեան գործերն էլ բաւարար չափով հերքում են յարգելի լորդի ասածները։ Ապացուցուած է, որ եթէ մինչև այժմ այս խնդիրը հարկաւոր կերպով չի լուծուած, համաձայն ընդհանուր խաղաղութեան շահերի, այդ բանում մեղքն ընկնում է բացառապէս Անգլիայի վրայ, որը հենց սկզբից արգելքներ էր յարուցել նրա լուծման դէմ և խանգարում էր մեծ պետութիւնների և Թիւրքիայի մէջև տեղի ունեցող բանակցութիւններին»։

Նոյեմբերի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարում են 2 ր. 50 կ.:

ՔՐՈՆԻԿՈՆ

Վեհափառի ճանապարհորդութիւնը։ Տեղական թերթերը հաղորդում են «Նոր-Դար»-ում լոյս տեսած այն լուրը, թէ Վեհափառ Հայրապետը իւր հօտին այցելութիւն է գնալու. այցելելու է Բագու, Թիֆլիս քաղաքները. ոմանք Գանձակի անունն էլ են տալիս։

—

Գէորգեանի սպանութեան գործը քննուելու է զինուորական նահանգական դատարանում նոյեմբերի 28 ին։

—

Կանանց բժշկ. ճեմարանը։ Կանանց բժշկական ճեմարանը բացուելու է 1898 աշնանը. մարտ կամ ապրիլ ամսին պէտ հրատարակելու են ընդունելութեան պայմանները։ Նիւթական կողմից ապագայ ճեմարանը դեռ ապահովուած չէ լիովին, որի համար նա դիմում տրել զանազան դէմստվաններին, քաղաքային ինքնավարութիւններին այլն, որոնցից մի քանիսը օգնութեան են հասել իրենց նուէրներով։ Ճեմարան մտնել ցանկացողների թիւը այժմ արդէն այնքան մեծ է, որ ստիպուած շատերին պէտք է մերժել։ Ճեմարանի վարչութիւնը զբաղուած է 50 կուրսիստկայի համար բնակարաններ հատկացնելու գործով։

—

Տիկին Սիրանոյշի նամակը։ Ստորև հրատարակում ենք Թիֆլիս պ. խմբագրին ուղղած տիկին Սիրանոյշի նամակը։ Նամակով տիկինը ինքը հաստատում որ մեռած չէ, հետևաբար վաղաժամ տեղական թերթերի հաղորդած լուրը շնորհալի դերասանուհու մահուան մասին։

—

Հնութիւններ «Արարատ» գրավաճառանոցում։ Թիֆլիսում Գոլովինսկի պրոսպեկտում նորերս բացուած «Արարատ» գրավաճառանոցում կան ի ցոյց դրուած մի քանի հետաքրքիր հնութիւններ—

Մի քարացած ծառ, 22 դիւյմ բարձրութեամբ, 11 դիւյմ տրամագծով, ծանրութեամբ մօտ 5 պուդ. այդ քարի մանրամասն նկարագրութիւնն ուղարկուած է Լոնդոնի հնագիտական Բրիտիշ մուզէյումը։

Մի մագաղաթէ երկաթագիր աւետարան, 9 դիւյմ լայնութեամբ, 12 դիւյմ երկ. և $1^1/_2$ դիւյմ հաստութեամբ. այդ աւետարանի մանրամասն նկարագիր ուղարկուած է հայր Ալիշանին։ Մի հին մագաղաթէ գրչագիր շարական, մի տօնացոյց մի սաղմոս։ Բացի սաղմոսից միւս ս. գրքերը գտնուած են հողի տակից։ Ինչպէս յայտնի է, հնումը, ինչպէս մինչև անգամ և այժմս, եկեղեցական գրքերն երբ հնանում էին թաղում էին եկեղեցու պատերի, պարիսպների տակ, կամ պարուէզներում։

Բացի վերոյիշեալ հնութիւններից կան և բազմաթիւ հին փողեր ինչպէս հայոց, յունաց, պարսից, արաբացոց և այլն. կան նաև քարացած խխունջներ, կոբիզներ, զանազան մանր հնութիւններ և մարմարի նման փափուկ քարեր որոնցով կարելի է գրել հաստ թղթի վրայ։

Այդ քարերը այն յատկութիւնն ունին որ փրփրում են ջրի մէջ. այդ պատճառով այնտեղի ժողովուրդը, ուր երևում են այդ քարերը, գործ են ածում նրանց իբրև օճառ՝ լուացքի համար։

—

տարրկայի յիշողութիւնը, որը նա երբէք չի տեսել»։ Մութն է. կասի ընթերցողը. մենք համաձայն ենք, բայց դա մեր բացատրութիւնը չէ, այլ սիմվոլիստներից մէկի Հ. Մորիսի։ Մի ուրիշը Ս. Մուլարմէն ասում է այսպէս՝ «ոչ մի առարկայ չպէտք է իւր անունով անուանել. հարկաւոր է ընթերցողի մէջ հոգու այնպիսի տրամադրութիւն առաջացնել, որ նա հասկանայ, զգայ թէ ինչ առարկայի մասին է խօսքը»։ Եւ ինչպէս մութն է նրանց բացատրութիւնները, այնպէս մութն են և նրանց գրուածքները, նրանք կարծես կամաւ այնպէս են գրում, որ ոչ ոք չհասկանայ. կասկածելի է, որ իրենք գրողներն էլ մի բան հասկանան։ Միթէ սա առողջ մարդու գործ է. թէ որ, ինչպէս մեզանկցիքն են ասում «տանեցիքը տանը լինեն» — մարդ երբէք չի համարձակուի տալ այնպիսի անկապ և անհասկանալի նախադասութիւններ, որի օրինակներն այժմ երևում են և ռուսաց գրականութեան մէջ։

Սիմվոլիստներից միքանիսը Ն. Դաուի ասելով ունին այլասեռութեան թէ ֆիզիկական և թէ հոգեկան նշաններ. օրինակի համար վերցնենք պ. Վէրլէնին։ Նրա դէմքը մի այլանդակ պատկեր է ներկայացնում և մինչև իսկ սարսափ է ազդում մարդու. Նրա կեանքի մանրամասնութիւնները անյայտ են, բայց միայն յայտնի է, որ նա երկու տարի բանտումն է եղել, իւր անբարոյականութեան պատճառով շատերը նրան խելագար են համարում. Նրա հոգեկան տրամադրութեան մասին ֆրանսիացի վիպասան Անատոլ Ֆրանսը ասում է՝ «Նա հաւատացող է և աթէիստ, ուղղահաւատ և անաստուած» Այսպիսի մարդկանց գիտնականները անուանում են circulaire (խելագարի մի տեսակն է) որոնք ամենախիստ պսիխոպատներն են։

Պսիխոպատութեան մէջ սիմվոլիստների հետ միշտ կարող են մըցել և այն արարածները, որոնց անուանում են դէկադէնտներ, այսինքն «անկման շրջանի ներկայացուցիչներ»։ Դրանց «գործունէութեան» մասին գաղափար կազմելու համար, մենք կըծանօթացնենք նրանց միքանի գրուածների հետ։ Օրինակ նրանց մի խումբ պնդում է, որ ամեն մի հնչում համապատասխան էլ մի որոշ գոյն ունի, ուստի որոշ հնչիւն լսելով մեր երևակայութեան մէջ իսկոյն առաջանում է մի որոշ գոյնի մտապատկեր։ Մի դէկադէնտ ամբողջ մի բանաստեղծութիւն է նուիրել այդ հարցին (Les voyelles-ձայնաւորներ), ուր ասում է «Ա-ն սև գոյնն է, Է-ն — սպիտակ, Ի-ն կարմիր, Ու-կանաչ, Օ-երկնագոյն»։ Ռէնէ Գիլը դրանց պարագլուխներից մէկն ասում է՝ «Տուիլը սպիտակ է, ջութակը-երկնագոյն. պղնձէ երաժշտական գործիքները, որոնք փառաւոր հանդէսներին են գործածւում-կարմիր են. սրինգները դեղնագոյն են, որովհետև երեխայական զգացմունքներ են արտայայտում» և այլն։ Ինքներդ կարող էք ասել, որ առողջ մարդը այսպիսի համեմատութիւններ չի կարող անել և որ մենք, հասարակ մահկանացուներս, երբէք ոչ սև, ոչ սպիտակ գոյն ենք կարողանում տեսնել կամ երևակայել այս կամ այն տառը կամ խօսքը կարդալիս։ Իսկ հիւանդանոցներում, հոգեկան հիւանդների մէջ մենք շատ յաճախ ենք պատահում այդպիսի մարդկանց, և դա դատանցանքի մի տեսակն է, ուրիշ ոչինչ։

Ահա մի օրինակ և նրանց ստանաւորներից՝

Rose, Emmeline,
Margueridette,
Odette,
Alix, Aline.

և այսպէս տասներեք տան կանանց սեփական անուններ. ստանաւորը վերջանում է այսպէս՝

Zulma, Zélie,
Régine, Reine,
Irène!...
Et j'en oublie.

Այսինքն, էլ «չի յիշում, մոռացել է»— բայց կարծում ենք այդ չարքն էլ բաւական է։ Մի ուրիշը մի բանաստեղծութիւն է գրում, որի բոլոր խօսքերը անով են վերջանում, իսկ ամբողջ ստանաւորը ոչ մի միտք չի յայտնում, միևնոյնն է եթէ մէկը առնէր գրէր բան, ծման, զանազան, վառարան, սեղան, ննջարան և այլն։ Դա էլ խելագարութեան մի տեսակն է, որ կոչւում է գիտութեան մէջ էխոլալիա։

Հապա ինչ ասենք այն մի չարք վիպասաններին և բանաստեղծներին, որոնք անառակութիւնը մի տեսակ սըրբութիւն են շինել, աշխատում են խունկ մատուցանել և մի տեսակ բաւականութիւն են զգում այնպիսի դրութիւններ, երևոյթներ և յարաբերութիւններ նկարագրելում, որից առողջ մարդը մի զզուանքով երեսը դարձնում է։ Սեռական պսիխոպատ պէտք է ընդունել այն գրողներին, որոնց վրայ կնոջ մի գուլպան, շալիկը և այլն մի անասելի ազդեցութիւն է գործում, որոնց համար «կնոջ հոտը» մի տեսակ քաղցր նեկտար է, և նրանք նրանով հարբում են։ Զօլան օրինակ իւր վէպերի մէջ, պարտք է համարում իւր բոլոր հերոսներից փչող հոտի հետ ծանօթացնել մեզ։ Այդ գրողների անասնական կրքեր, մանաւանդ հոտառութիւնը ինչպէս երևում է շատ է զարգացած, և այդ ցոյց է տալիս նրանց հոգու անկանոն զարգացումը։ Նրանք նախամարդոց են յիշեցնում և այլասերուողների նշաններ են ցոյց տալիս։

Եղանակը Թիֆլիսում եւ վառելափայտի թանկութիւն. - Վերջերս Թիֆլիսում չոր ցրտեր են անում, այդ բանից օգուտ քաղելով վառելափայտի պահեստ ունեցողները գները սաստիկ թանգացրել են, սաժէնը 35 - 40 ր. սաժէնն էլ Աստուած սաժէն համարէ. գերանները այնպէս են զարսած, որ մէջերը ազատ է թաչում: Վառելափայտ կրող սայլապաններն էլ խիստ երես են առել, քաղաքի հեռու մասերում սաժէնը 4—5 րուբլուց պակաս չեն տանում, իսկ մօտիկ մասերում 3—4 ր:

—

Կ. Հ. Բ. Ը. ընդհանուր ժողով. Նոյեմբերի 17 ին, կիրակի, երեկոյեան ժամը 7-ին Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակուած է Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են.

1) Ընկերութեան ընդհանուր, այն է կենդրոնի (խորհուրդ) և 18 ճիւղերի 1895 թուի հաշիւների քննութիւնն ու հաստատութիւնը:

2) Վերստուգող յանձնաժողովների զեկուցագրերը այդ հաշիւների մասին:

3) Հին-Նախիջևանի, Ցխինվալի ուսգական վարչութիւնների նախահաշիւները և Կարսի ու Արմաւրի յաւելուածական նախահաշիւները 1896 թուի համար:

Ընկերութեանս 1895 թուի տեղեկագիրը տպագրած լինելով, անդամները կարող են մի մի օրինակ ստանալ, դիմելով խորհրդի գրասենեակը (Սերգիեւսկայա փողոց, տուն № 16):

—

Նոր մաքս. Պետական խորհրդի մէջ պիտի քննուի Մոսկուայի և ուրիշ մեծ քաղաքների օգտին նշանակուելիք նոր մաքսի հարցը. այդ մաքսը պիտի դրուի ներմուծուող և արտահանուող ապրանքների վրայ:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ. Նոյեմբերի վերջերին, Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ ս. Էջմիածին էր եկել Հաղարծինու վանքի վանահայր Պօղոս վարդապետը. մի քանի օրից յետոյ հիւանդացաւ և հիւանդութեան երրորդ օրը վախճանուեց: Նոյեմբերի 3-ին կատարուեց հանգուցեալի օծումը վանքի Մայր տաճարում և թաղուեց միաբանութեան հանգստարանում. Եկեղեցում հանգուցեալի վրայ մի սրտայոյզ դամբանական խօսեց գեր. Սուքիաս արքեպիսկոպոսը գլխաւորապէս շեշտելով նրա ազնւ բնաւորչ կողմերի վրայ, որ էր ջերմ սիրով ծառայել ազգին, եկեղեցուն. Հանգուցեալը 40-ական թուականներում Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցումն է եղել, 50-ական թուականներում վարդապետ ձեռնադրուել, իսկ 62 թւին ձեռնադրուել է Հաղարծինու վանքի միաբանութեան՝ խլելով այն աւազակաբարոյ թուրք ապարների ձեռքից: Այժմ Հաղարծինը մեր չէն վանքերից մէկն է: Հանգուցեալի վերջին ցանկութիւնն էր իր վերակենդանացրած վանքի բակում թաղուել: Նոյեմբերի 2-ին արժ. Անտոն վարդապետն ուղարկուեց Հաղարծինու վանքը՝ նրա կայքերն ցուցակագրելու: Վանքը, ինչպէս յայտնի է, բացի 700 դեսեատին պատուական անտառից, ունի նաև շարժական կայքեր և անասուններ, որոնք բոլորն էլ հանգուցեալի աշխատութեան պտուղներն են:

—

Նոյն տեղից. —Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ ս. Էջմիածին եկան նախ Բեսարաբիայի վիճակի կառավարիչ բարձրապատիւ Յուսիկ վարդապետը և Նոյեմբերի 6-ին Շամախու թեմի առաջնորդ գեր. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանը: Ձայն կայ, թէ գերապատիւ սրբազանին յանձնուելու է վանքում լուսարարապետի պատուաւոր պաշտօնը, իսկ նրա տեղ առաջարկուած է գեր. Այվազեան Կարապետ եպիսկոպոսը: Գեր. Մակար եպիսկոպոսը հմուտ լինելով Երուսաղէմի միաբանութեան կարգերին, որոնք մեզանում օրինակելի են համարւում, յոյս ունինք որ կարգ ու կանոն կմտցնի իր պաշտօնին վերաբերեալ բոլոր գործերում:

ԷԼԻ ՄԻ ՆՈՐ ԴԷՊՔ ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Նամակ խմբագրութեան)

Անցեալները «Նոր Դար»-ը մեծ չփութեան մէջ էր ձգել Քաղաքային վարկի ընկերութեան գործերով հետաքրքրուողների շրջաններին՝ մերկացնելով յիշեալ բանկային հաստատութեան մէջ տեղի ունեցած մի զեղծումը: Գործը վերաբերում էր Վարկի ընկերութեան պ. գանձապահին, որ ընկերութեան փողերով օբլիգացիաներ էր առել և ծախել առանց վարչութեան գիտութեան և օրոշման:

Այդ մերկացման հետևանքն այն եղաւ, որ ընկերութեան անդամները արտակարգ ժողովի կոչուեցան և ժողովը գործը քննելով գանձապահ պ. Տիգրանեանի վարմունքը ապօրինի ճանաչեց և միքանի խիստ և արտակարգ միջոցներ առաջարկելով կամեցաւ ապագայում առաջն առնել նմանօրինակ զեղծումների:

Բայց փորձը ցոյց տուեց յետոյ, որ այդ խիստ միջոցներն ապարդիւն անցան և զեղծումները կրկնւում են մինչև օրս:

Որպէսզի զրախօսութիւն չհամարուի իմ ասածս, խնդրում եմ յարգելի խմբագրութիւնից թոյլ տալ ինձ պատմելու «Նոր Դար» ի էջերում առաջ հաստատելու փաստերով, միմիայն փաստերով:

Ահա իմ փաստերը:

Ներկայ տարուայ յունուար ամսին տեղի ունեցաւ Քաղաքային վարկի ընկերութեան գանձարանի քննութիւնը, որով յայտնուեց, որ գանձարանում կտրօնների թիւը պակաս է:

Այնուհետև քննութիւն տեղի ունեցաւ անցեալ ապրիլ ամսին, որ նոյն թերութիւնը յայտնուեց, իսկ վերջերս հոկտ. 21-ին յայտնուեց, որ առձեռն դրամ է պակասում գանձարանում:

Այդ երեք դէպքի մասին վերաքննիչ յանձնաժողովը իր ժամանակին արձանագրութիւններ է կազմել և առաջարկել պ. Տիգրանեանին լրացնել պակասորդը:

Ստուգելու համար թէ արդեօք պակասորդները լրացրած են թէ ոչ, վերաքննիչ յանձնաժողովը նորից քննութիւն է նշանակում անցեալ հոկտ. 29-ին և այդ մասին ծանուցանում է վարկի ընկերութեան վարչութեանը: Այդ քննութեան օրը հաւաքւում են յանձնաժողովի անդամները, գալիս է և ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչ պ. Գուլբինը:

Վարչութիւնը իր կողմից նշանակում է մի քանի համարագներ՝ կտրոնները համարելու համար:

Բայց գործի հենց սկզբումը քննութիւնը խանգարւում է պ. Տիգրանեանի veto ով, միջամտութեամբ: Պարոնը բացարձակ յայտնում է, թէ ինքը չի թոյլ տալ, որ կտրօնները նրանք համարեն, չէ որ մի անգամ կտրօնների գոյութիւն է տեղի ունեցել:

Այս տարօրինակ վարմունքից յետոյ վերաքննիչ յանձնաժողովի անդամները և պ. Գուլբինը ընդհատում են գանձարանի վերաքննութեան գործը և հեռանում:

Վերաքննիչ յանձնաժողովը այդ դէպքի մասին արձանագրութիւն կազմելով բողոք է ներկայացրել վարչութեան, որի մէջ եղելութիւնը նկարագրելով ասում է.

«Պ. գանձապահի այդ վարմունքից յետոյ յանձնաժողովն անյարմար համարեց շարունակել կտրօնների համարելը, նամանաւանդ որ հոկտ. 21-ին քննութեան միջոցին գանձարանը կարգին դրութեան մէջ չէր. թէպէտև պակասած գումարն աննշան է, բայց դա ցոյց է տալիս, որ գանձարանը չէ պահւում ինչպէս հարկն է:

Գտնելով գանձապահ պ. Տիգրանեանի այդօրինակ գործողութիւնները վերանորական, անկանոն և ընկերութեան շահերի համար վնասակար, վերաքննիչ յանձնաժողովս խոնարհաբար խնդրում է ընկերութեան վարչութիւնից անմիջապէս արտակարգ ընդհանուր ժողով գումարել, որպէս զի առաջն առնուի պ. Տիգրանեանի այդօրինակ վիրաւորական և ապօրինի գործողութեան»:

Այդ բողոքի վերջումը յանձնաժողովն յայտնում է, որ պ. Տիգրանեանի հետ միասին ծառայելն անկարելի է դարձել:

Զատ եղելութիւնը այստեղ արձանագրելով պիտի աւելացնեմ, որ ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչ պ. Գուլբինը նոյնպէս բողոք է ներկայացրել աւելացնելով, որ ընդհանուր ժողովի որոշումը պաշտօնապէս իրեն յայտնէ այդ ընկերութեան վարչութիւնը:

Տեսնենք դեռ էլի ինչ լոյս կընկնի և լինելիք ընդհանուր ժողովը այս անգամ ինչ կորոշի:

Ընկերութեան անդամ

Թիֆլիս, 7 նոյեմբ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ պարոն

Սպանդար Սպանդարեան.

Ցաւօք սրտի իմանում եմ իմ բարեկամներից մէկէն թէ դժբաղդաբար ես մեռել եմ և Թիֆլիսի լրագիրները հաստատել են իմ մահը: Այս ցաւալի գոյժը ինձ վերին աստիճան արտասուալի սգոյ մէջ ձգեց ու չգիտէի կարողանայի սփոփուել, եթէ առաջածս մի քանի մխիթարական նամակներ չզգաստացնէին զիս մտածելով, որ միայն Թիֆլիսի լրագրներն են ծանուցանում իմ մահագոյժը. մինչդեռ ես այստեղ եմ և աւելի լաւ եմ զգում ինձ քան երբէք: Նշանակում է որ ես մեռել եմ Թիֆլիսի համար, քանի որ այստեղի լրագրները չեն գրում այդ մասին:

Ուստի խոնարհաբար խնդրում եմ իմ կարծեցեալ մահուան առթիւ երկտողիկ մը շնորհել Ձեր պատուարժան լրագրում:

Մնամ Ձեզ յարգող՝

Սիրանոյշ:

Կ. Պոլիս, 27 հոկտ. 1896 Թ.

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Ռուս թատերական գործողների մի համագումար ժողով է տեղի ունենալու առաջիկայում: Եթէ հաւատանք մամուլի մէջ լոյս տեսած լուրերին, ժողովի ծրագրի մէջ, ի միջի այլոց, մտնում է և մի տարօրինակ խնդիր, որ վերաբերում է ռեցենզենտների համար ցենզ սահմանելուն: Այդ խնդրի հեղինակներն անշուշտ դերասաններն են, որովհետև ինչպէս նկատում է «Նովոստի» լրագրի Մոսկուայի ֆէլյետոնիստը,

> ռեցենզենտների և դերասանների միջև վաղուց արդէն պարզ որոշ պառակտումն կայ, և ես չգիտեմ – կարելի՞ է արդեօք այդ պառակտմանը երբևիցէ վերջ տալ: Ամբողջ աշխարհիս մէջ, կարծեօք, ոչ մի մարդ չկայ, որը իր գործունէութեան մասին եղած դատողութեանն այնպիսի անհամբերատարութեամբ վերաբերուէր, ինչպէս այս դէպքում վերաբերւում են դերասանները: Դերասանների մեծ մասը միայն այն ռեցենզենտին է շնորհալի ու հեղինակաւոր համարում, որը գովում է իրենց. դատափետող ռեցենզենտը հալածուող և տանջի մարդու վատնելի մէջ է միշտ:

Սակայն, եթէ համագումարի մէջ իսկապէս մտադիր են ռեցենզենտների համար ցենզ սահմանելու խնդիրը յարուցանել և այդ խնդիրը յարուցանողները դերասանները չեն, այլ գեղարուեստը սիրող ուրիշ մարդիկ, այդ դէպքում ևս րնի ի նկատի ունին միայն անկոչ ռեցենզենտներին, որոնք

> շատ էլ պարզ կերպով չեն հասկանում իրենց նշանակութիւնը, օգտւում են քաղում գրչի և մամուլի զօրութիւնից ոչ թէ գեղարուեստին, այլ բոլորովին կողմնակի նպատակների ծառայելու համար:

Բայց և այնպէս, այդ աննշան իրողութիւնների հիման վրայ խելքներին զօր տալ, թէ անհրաժեշտ է ինչ որ աշակերտական քննութիւններ նշանակել ռեցենզենտի կոչումը տալու համար այս կամ այն անձին,—դա թէ համարձակ և թէ ապարդիւն խաղ է:

> Մամուլի ամբողջ ոյժը հենց նրանումն է, որ հրապարակախօսի արհեստը բոլորովին ազատ արհեստ է. Նրա խօսքը պէտք է ազատ լինի, ինչպէս ազատ է միտքը մարդու գլխի մէջ: Նրա խօսքը հպատակւում է միայն ներքին համոզման և միայն մի բանով կարող է գնահատուել—անկեղծութեամբ: Իսկ ոչ ներքին համոզումը, ոչ անկեղծութիւնը չեն կարող որևէ ստուգութեան և գնահատութեան ենթարկուել—դա խղճի գործն է,

բայց ոչ դերասանները, որոնք «արհամարհում» են ռեցենզենտներին, բայց առանց նրանց ապրել չեն կարող:

Թատերական գործողների համագումար ժողովը, փոխանակ ռեցենզենտների համար ցենզ սահմանելու ապարդիւն գլխացաւանքն յանձն առնելու, աւելի լաւ և նպատակայարմար բան չէր անիլ, եթէ զբաղուէր ուղղակի դերասանների համար ցենզ սահմանելու խնդրով: Ճշմարիտ է, դրա համար կան թատերական կուրսեր, բայց ընդարձակ Ռուսիայի մէջ ցրուած բազմաթիւ դերասանների և դերասանուհիների մէջ քանիսը կան, որոնք նախքան բեմ դուրս գալը ուսել են դերասանութեան արհեստը, քանիսը կան, որոնք դերասանութեան պահանջած հարկաւոր կրթութիւնն ունին, էլ չենք ասում շնորհքը, տաղանդը...

Մակս Նորդաուն դեռ երկար ու բարակ կանգ է առնում Տոլստոյի հակամուսնական քարոզի վրայ, որը նրա կարծիքով մարդկութիւնը դէպի ոչնչացումն է տանում. խօսում է Ռ. Վագնէրի տարօրինակ, եղանակներից զուրկ երաժշտական ճաշակի մասին, Իբսէնի և փիլիսոփայ Նիցշէի եսապաշտական քարոզների մասին...

Բայց բաւական է:

Ահա այդ հեղինակներն են, որոնք ներկայումս հասարակութեան համար կուռքեր են դարձել. այդ մարդիկն են, որոնք «դպրոցներ», «կուսակցութիւններ» են ստեղծում: Յայտնի է որ երամական ձգտումն էլ պսիխոպատութեան մի նշան է. բոլոր այլասերուողները այդ յատկութիւնը ունին, որը և առիթ է տուել հռչակաւոր բժիշկ Շարկոյին ասել՝ Les nerveux se recherchent, այսինքն նեարդային հիւանդները իրար փնտրում են:

Փ.

Այսպէս ուրեմն Նորդաուի կարծիքով արդի հասարակութիւնը հակումն ցոյց տալով դէպի այլասերուող մարդիկը, ցոյց է տալիս և իր այլասերուելու ճանապարհին լինելը: Բայց թէ ինչպէս է նա ընկել այդ ճանապարհի վրայ, որոնք են այդ ընդհանուր այլասերութեան պատճառները, Նորդաուն այդ հարցերին երկայն և սրամիտ փաստերով լի մի գլուխ է նուիրում, որի կարճառօտ բովանդակութիւնը միայն մենք առաջ կբերենք: Այլասերութեան գլխաւոր պատճառներն են բազմաթեայ ինքնաթունաւորումը, որին ենթարկւում է մեր հասարակութիւնը: Մեզնից ով չի գործածում գրգռող և հարբեցնող նիւթեր՝ գինի, օղի, ծխախոտ, իսկ շատ տեղերում հաշիշ, աֆիոն, արսենիկ և ուրիշ խմիչքներ. իսկ ամենօրեայ մեր սննդի մէջ քիչ թոյն կայ. հապա հիւանդութիւնները—ինչպէս օր. ճահճային տենդը, թոքախտը և այլն: Այս բոլորի շնորհիւ առաջ է գալիս մի թոյլ և անպէտք սերունդ, որ այլասերութեան բոլոր նշաններն արդէն իսկ ունի: Եւ-տայ որքան վնասակար է մեծ քաղաքների կեանքը, իր մշտական շարժումով, վատ ջուր և օդով, աշխատանքով: Իսկ աշխատանքը ինքնըստինքեան՝ ու չի ջլատում մեր ուժերը, մեզ և մեր սերունդը չի թուլացնում. Այժմ մենք 5 ից մինչև 25 անգամ աւելի ենք աշխատում, քան թէ մի դար առաջ: Բայց թէ այդ աշխատանքի համապատասխան սնունդ էլ ստանում էինք: Անշուշտ ոչ: Մի թէ մեզ չեն յոգնեցնում, մեր առողջութեանը չեն վնասում մեր ճանապարհորդութիւնները, տպարանները, մեր գործարանները, վերջապէս մեր օրըստօրէ բազմացող սպասարութիւնները, որոնք այնքան շուտ-շուտ փոխւում են:

Այս բոլոր երևոյթներից յոգնած հասարակութեան մէջ ի հարկէ կարող են երևալ այնպիսի ուղղութիւններ, որոնց հետ մենք ծանօթացրինք ընթերցողներին: Դրականութեան և գեղարուեստի վարձկաններն էլ շահագործում են հասարակութեան պահանջը և իրենց տկար ուղեղի ու երևակայութեան ծնունդը ապարէկ դուրս բերում:

Այսպիսով հասարակութեան անդամները սթափուելու, մոռանալու և իրենց դրութեան մասին հոգալու փոխարէն կոյրերի նման ձեռք ձեռքի տուած հետևում են իրենց այդ ներին, որոնք դէպի կորուստ, դէպի անդունդ են տանում:

Դա յառաջադիմութիւն չէ, այլ յետադիմութիւն – ասում է Նորդաուն և ամենքիս պարտականութիւնն է դիմադրել դրան ինչով որ կարող ենք. Նախ և առաջ պէտք է համարձակ խօսենք և իրերին իրենց սեփական անունները տանք. եթէ այլասերութիւն է, այլասերութիւն անուանենք, խելագարութիւն է,—խելագարութիւն, հոգեկան հիւանդութիւններն էլ այդպէս և ոչ թէ երամական սովորութեամբ ծափ տանք և երկինք բարձրացնենք յանդգան խէնթ խելարներին ու ամօթները կորցրած պոռնոգրաֆներին:

—

Թէ որքան իրաւացի է Նորդաուն, դա այլ խնդիր է. Թող ընթերցողն ինքը կարդայ նրա շարադրութիւնը, եթէ հետաքրքրւում է նրանով:

Մի ֆրանսիացի կրիտիկոս-Ռենէ Դումիկ պատասխանում է Նոր-Դաուին մի առանձին յօդուածով և կարծում է, որ թէպէտև հասարակութեան և գրականութեան մէջ շատ այլանդակ երեւոյթներ են տեղի ունենում, սակայն դեռ չի կարելի ասել, որ դրանք այլասերութեան նշաններ են: Ո՞վ գիտէ, գուցէ սա մի անցողիկ ժամանակաւոր անկումն է, ճգնաժամ է, որի վերանալուց յետոյ կըգայ մի նոր, առողջ, փայլուն և բազմարդիւն շրջան: «Բանը այն է. ասում է Ռենէ Դումիկը, ինչպէս և ամեն բանի մէջ. այնպէս և գրականութեան մէջ փոփոխութիւնները առանց ճգնաժամի չեն լինում, ամեն մի փոփոխութեան հետևում են խանգարումներ և նորը կառուցանել կարելի է միայն աւերակների վրայ»:

Մեր կարծիքով էլ Նորդաուն փաստերը ճիշտ է արձանագրում, բայց սխալ եզրակացութիւններ է անում: Մենք նրա նման յոռետես չենք և չենք կարող մարդկութեան մօտալուտ վախճանը ողբալ. ընդհակառակը, մենք հաւատում ենք, որ սա դեռ սկիզբն է երկանց, որ դեռ կըգայ ժամանակ, երբ սէրը ընդհանուր և մերող կըդառնայ. ուստի կրկնում ենք բանաստեղծի խօսքերը թէ,

> «Խորին հաւատով երջանիկ օրեր, գալիք փրկութեան
> Ես հաւատում եմ և չեմ վրդովւում...

Մինաս Բերբերեան:

.˙. Խարկովի մի խումբ ինտելիգենտ կանանց շրջանում, «Իւժ. Կրայ» թերթի ասելով, մի համակրելի միտք է յղացել Խարկովի վրայով Սիբիր արտաքսուող ոճրագործների դժբաղդ ընտանիքներին օգնելու։ Այդ ոճրագործներից շատերի հետ կամովին գնում են նրանց կանայք և երեխաները։

Դժբաղդ, ոչ մի բանում մեղ չունեցող երեխաները ճանապարհին ենթարկւում են ամեն տեսակ զրկանքների, որոնցից մէկն այն է, որ նրանք անհրաժեշտ հագուստը չեն ունենում։ Ահա այդ զրկանքի առաջն է, որ Խարկովի տիկնայք և օրիորդները կամեցել են առնել։ Օգնութեան մի փոքրիկ ընկերութիւն են կազմել նրանք հետեւեալ կերպով. գործի ձեռներէց տիկնոջ մօտ, որ բարեգործութեան աշխարհում մի յայտնի անձնաւորութիւն է, նշանակեալ օրերին հաւաքւում են իւր ծանօթ տիկնայք և օրիորդները և ներկայ եղողներից մէկը սկսում է բարձրաձայն կարդալ որևէ յօդուած կամ պատմուածք, իսկ բոլոր մնացածները գործ են կատարում, այնպէս որ երբ երեկոյթը վերջանում է, գործ կատարողները երեխանց մի քանի հագուստ են լինում պատրաստած, որոնք և ուղարկւում են ըստ պատկանելոյն։

Մեր ինտելիգենտ տիկնանց և օրիորդների ուշադրութիւնն ենք հրաւիրում Խարկովի իրենց ներկայացուցիչների այս համակրելի գործի վրայ։ Թող նրանք իրենց շուրջը մի հայեացք ձգեն և կարծում ենք, իսկոյն կըտեսնեն, թէ ում հարկաւոր է, որ իրենք այս կամ սրա նման ուրիշ միջոցով օգնեն...

ԹԵԱՏՐՈՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց ներկայացում. Հինգշաբթի, ամսոյս 7-ին հայ դերասանների ընկերութիւնը ներկայացրեց «Արտոյտ» կոմեդիան, հեղինակ. Վիլդէնբրուխի։ Թարգմանութիւնը պարզ և հասկանալի լեզուով էր արած, թէպէտ և տեղ տեղ փոփոխութեան կարիք կայ։

Այս անգամ դերասանները լաւ էին պատրաստուել, ուստի ներկայացման տպաւորութիւնը գոհացուցիչ էր. միայն յուշարարն էր, որ իւր բարձրաձայն յուշարարութեամբ մի քիչ փչացնում էր ընդհանուր տպաւորութիւնը։

Ամենից աւելի յաջողութիւն ունեցաւ պ. Մամիկոնեանը, որ զգալի կերպով յառաջադիմում է. շատ լաւ էին նրա գրիմը, միմիկան. միայն ձայնը և շարժումները, մեր կարծիքով, չէին համապատասխանում նրա դերին. բացի դրանից, պ. Մամիկոնեանը պէտք է լաւ ուշադրութիւն դարձնի իւր առոգանութեան վրայ։ Լաւ էր և կ. Աբրաքսեանը, որը սակայն պէտք է աւելի լուրջ լինէր. բացի դրանից, նա դերն էլի չգիտէր։ Տիկ. Մելիքեանը Լէնայի դժուար դերը բաւականին յաջող անցկացրեց։ Վատ չէին և մնացեալները։

Թատրոնը դատարկ էր—хоть шаромъ покати. ափսո՜ս թիֆլիսեցիներ. բայց մինչև երբ այսպէս։ Ասում են հետեւեալ անգամը պէտք է ներկայացնեն «Արդիւնաւոր պաշտօն»-ը։

—

Դաշնակահար պ. Ն. Տիգրանեանը. գնում է Շուշի, ուր նուագահանդէս է տալու. ապա մտադիր է գնալ Ռուսիայի մայրաքաղաքները, իսկ ճանապարհին այցելելու է հարաւային Ռուսիայի հայաբնակ քաղաքները, ուր, պ. ծանօթանան պ. Տիգրանեանի տաղանդի հետ։ Պ. Տիգրանեանը շատ համակրելի գործ է յանձն առել—ժողովրդականացնել մեր և արևելեան ուրիշ եղանակները։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

ՄԱՐԱՂԱ, 24 հոկտ. — Պարսկական այս վաճառաշահ գաւառական քաղաքը, որ ընկած է Ուրմիոյ ծովակի արևմտեան անկիւնում, նշանաւոր է չոր մրգեղէնի առևտուրով, ուր աշնանը Պարսկաստանի զանազան քաղաքներից հաւաքուած հայ գործակատարները մեծ եռանդով հաւաքում են չորացրած միրգ, բազմատեսակ չամիչներ, նուշ, ընկոյզ և այլ չոր մրգեղէններ և արտահանում Ռուսիայի զանազան քաղաքները։

Ռուսահայ գործակատարները, եթէ տեսնէին պարսկահայ գործակատարներին՝ փառք կըտային իրենց դրութեանը։

Քաղաքի բնակիչների թիւը տաս հազարից անցնում է, որոնցից 150-ը ընիկ մարաղեցի հայեր են, և այն էլ անուամբ միայն, որովհետև հայկական ոչինչ չկայ, տարազը, սովորութիւնները և նիստ ու կացը բոլորովին պարսկական է և գրեթէ գերի են անփիոնին, չիբուղի և օղուն, որոնք բթացրել են մարաղեցի հայի ուղեղը։

Երկար տարիներից ի վեր, դրսի հայերի երթևեկութիւնը չի կարողացել մարաղեցի հային հանել իւր դրութիւնից։ Հայերը ունին մի փայտաշէն եկեղեցի մի քահանայով, որը ոչ հայերէն մաքուր խօսել գիտէ և ոչ էլ եկեղեցական կանոնաւոր պաշտամունքներ կատարել։ Դպրոց համարեա չկայ, եղածն էլ խաղալիք է դարձել մի ինչոր քահանայացուի ձեռքին, որը երբ ուզում է, բանում է դպրոցը։ Մարաղեցի հայը նեղ օրերում պարսկանալու խիստ ախորժակ ունի, իսկ լայն օրերում երբեմն հայ և երբեմն էլ բողոքական։ Մինչև այժմ Թաւրիզի տասից տասը անուններով կնքուած ընկերութիւնները ուշադրութիւն չեն դարձրել մարաղեցիների վրայ, միայն մօտ օրերս «Ընթերցասիրաց» ընկերութիւնը մի քանի կտոր գրքեր է ուղարկել, որպէս զի գրադարան բացուի, բայց չմոռանանք յիշելու, որ այդ գրադարանն էլ բողոքականների խնամակալութեան է յանձնուած...

Դիտակ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Զատ խօսակցութիւնների առարկայ է դարձել Գերմանիայում Վիլհելմ կայսրի հրամանը, որով Պոզնանի գաւառի դրօշակի մինչև այժմ ունեցած գոյները (կարմիր - սպիտակ) փոխւում են «սպիտակ—սև—սպիտակ» գոյների։ Կառավարչական թերթերն այդ միջոցը պատճառաբանում են նրանով, որ վերջին ժամանակս Պոզնանում լեհական ագիտացիան նորից սկսել է բաւական մեծ ծաւալ ստանալ։ Օպալենիցում կատարուած անկարգութիւններն առանձնապէս ապացուցեցին, թէ այդ գաւառի լեհ բնակիչների մէջ ինչպիսի ոգի է տիրում։ Լեհական բոլոր յոյցերի ժամանակ կարմիր— սպիտակ դրօշակները գլխաւոր դերն են խաղում և, իբրև հայրենիքի յիշատակ, զգացող ազդեցութիւն են ունենում։ Այս հանգամանքի վրայ վաղուց ուշադրութիւն էր դարձուած, բայց ինչ ինչ պատճառներով չէին վըստահանում վերացնել լեհական «ազգային» գոյները։ 1882 թ. հրաման էր արձակուած փոխելու կարմիր գոյնը, բայց այդ կիսամիջոցը ձեռք առնելով կառավարութիւնը ցոյց տուեց միայն իւր թուլութիւնը և մինչև անգամ ծաղրի ենթարկուեցաւ։ Բացի դրանից այդ հրամանը շուտով մեռած տառ դարձաւ, և կարմիր գոյնը նորից հանդէս եկաւ Պոզնանի լեհական դրօշակների վրայ։ Այժմեան կարգադրութիւնն ապացուցանում է, որ կառավարութիւնը վճռել է վերջ տալ իրերի այդպիսի դրութեան։ Պոզնանին պրուսական գոյները տալով, նա հաստատապէս ցոյց է տալիս, որ այդ գաւառը պատկանում է Պրուսիային և այսուհետև կարմիր - սպիտակ գոյների գործածելը ցոյց կըհամարուի կառավարութեան դէմ։

Այս կարգադրութիւնից դժգոհ են, բացի լեհական թերթերից, նաև կաթոլիկ թերթերը։ Կեդրոնի գլխաւոր բերան «Germania» թերթը յայտարարում է, որ այդ կարգադրութիւնն ուղղուած է ոչ թէ միայն լեհ ազգայնութեան, այլ և հռովմէական կաթոլիկ եկեղեցու դէմ, որը նոյնպէս շատ դէպքերում սպիտակ—կարմիր գոյնն է գործածում։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի.—Այսօր, Կայսրուհի Եկատերինա II-ի մահուան հարիւրամեակի օրը, եկեղեցիներում հոգեհանգիստներ եղան. հանգուցեալ Կայսրուհու յիշատակին նուիրուած հանդիսաւոր ժողովներ տեղի ունեցան պատմական ընկերութեան մէջ և հանքաբանական ինստիտուտում։

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ. — Վճռաբեկ ատեանում բողոք էր քննւում խառն դատարանի վճռի դէմ, որով ապօրինի էր համարւում պետական պա տքի վարչութեան այն վարմունքը, որ նա պահեստի գումարից կէս միլիոն ֆունտ ստեռլինգ էր ծախսել Դոնգոլի արշաւանքի վրայ։ Եգիպտոսի երդուեալ հաւատարմատարները, պետական պարտքի գանձարանի վարչութեան և եգիպտական արժեթղթերի տէրերի սինդիկատի ցուցմունքները լսելուց յետոյ, դատարանի նիստը փակեցաւ։ Նոյեմբերի 12-ին իւր կարծիքը կըյայտնի ընդհանուր ենթ-քարտուղարը։ Նոյեմբերի 26-ին դատարանը իւր վճիռը կըկայացնէ.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 նոյեմբերի. - Թագաւոր Կայսրը հաճեց հաւանութիւն տալ, որ հանքաբանական ինստիտուտը կոչուի «Կայսրուհի Եկատերինա II-ի անուան հանքաբանական ինստիտուտ»։

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ. — Ֆիլիբուստիերի «Լաուրադա» շոգենաւի կապիտանը դատի է մատնուած Կուբայի ապստամբներին աջակցելու համար։

ՋԻԲՈՒԹԻ.—Ադիս Աբաբից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ իտալական մօտ 200 գերիների խաղաղութեան դաշնագիրը վաւերացնելուց առաջ թոյլ կըտրուի մեկնել Զէյլա նոյեմբերի 20-ին, իտալական թագուհու ծննդեան օրուայ յիշատակին։

Պաշտօնակատար խմբագրի՝
ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ
Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՀԻԳԻՆՍՈՆ" ԸՆԿ.

ԾԱՂԿԻ ԷՔՍՏՐԱԿՏՆԵՐ

ՋԱՆԱԶԱՆ ՀՈՏԻ. հաճելի են, դիմացկուն, նշանաւոր կերպով [illegible] են մինչև այժմ գոյութիւն ունեցող ծաղկի օծանելիներին և [illegible]

Գլխաւոր պահեստները СПБ., Площ. Александр. театра, 9. МОСКВА, ВАРШАВА. № 44717.

(М.) 14—1

Լոյս տեսաւ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ
✦ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԵՐ✦
Գինն է 15 կոպ.
Ցանկացողները կարող են գնել Կենտրոնական, Կովկասեան և Արարատ գրավաճառանոցներից, կամ «Նոր-Դար» ի խմբագրութեան հասցէով։ 5—5.

Խնդրում եմ Մաղնայ Ս. Գէորգ եկեղեցու մեծապատիւ ծխականներին շնորհ բերել նոյն եկեղեցին կիրակի նոյեմբերի 10-ին, 11½ ժամին ՆՈՐ ԵՐԵՍՓՈԽԱՆԻ ընտրութեան համար։
Գործակալ եկեղեցեաց Հայոց Տփխիսոյ՝ Դ. ա. ք. ԽԱՐԱԶԵԱՆՑ
(675) 2—2.

Արդէն լոյս տեսան առաջիկայ 1897 թ. մեր աշխատ.
„ԾՈՑԻ", „ՊԱՏԻ" ԵՒ „ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ"
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
ԱՒԵԼԻ ՇՔԵՂԱՑՐԱԾ ԵՒ ՀԱՐՍՏԱՑՐԱԾ
Ցանկացողները թող շտապեն մեզ հաղորդելու, որպէս զի պատուէրները կարողանանք ժամանակին հասցնել։ Հասցէն Թիֆլիս
Մակար Աժչկեան.
(670) 14—14

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ".

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ, երկու շաբաթը մի անգամ։

Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։

Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, 13 նոյեմբերի (25 նոյեմբերի) «Միլկասիս» շոգենաւը, նաւապետ՝ Բոշեյ։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական գինով ունին։
Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները տանելու համար դիմել՝
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԽԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիոնի փողոց, քարվանս. Գէորգ ադայի
Բագւում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ՄԵԼԽԻՕՐ ԳԵՐՁՆԵՐՈԴԵՐԻՆ։
(665 20—4

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակում և գրավաճառանոցներում վաճառւում են ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները։

82	Զիլիոնի կալանաւորը, Մ. Հարտմանի, Ի. Կ. Գիւլնազարեան	—	60
83	Համլէտ Շէքսպիրի, թ. անգ. Յով. խան Մասէհեանի	—	75կ
84—87	Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Գարագաշեանի չորս հատ	4	—
88	Պատմ. Հայոց, բ. տպ. Ս. Պալասանեանի	1	50
89	Ակնայ հնութիւնք, Յ. Ճանիկեանի	2	—
90	Ուրբինօեցի մանուկը, Ուիդի գրուածներից	—	10
91	Կոշկակար երաժիշտ, Տիւտչեվի	—	5
92	Խնձորենիների երկրում, Ուիդի գրուածներից	—	10
93	Երկու եղբայր, հեղ. տիկ. Մօնգոմերի թարգմ. Գ. Գ.	—	60
94	Մեծապ. Մուրաց., գ. տպ. Յ. Պարոնեանի	—	40
95	Նախագիտելիք բուսաբանութ. Ա. Քիշմիշեանի	—	80
96	Հազարից մէկը, Ն. Մամիկոնեանի	—	60
97	Ինչպէս կուզէք, Շէքսպիրի. թ. Յ. խան Մասէհեանի	—	50
98	Դպրոցական առողջապահ. բժ. Վ. Արծրունի	—	50
99	Կեղեքիչ. վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկօյի	—	10
100	Գոռոզ արմաւենի, } Վ. Գարշինի, թարգմ. Հ. Առաքելեան.	—	5
101	Գոռոզ Ագգէն,	—	5
102	Ճանապարհորդ գորտը,	—	3
103	Մանկական լօտօ, պատկերներով	1	20
104	Գեմանփորի երեխան. թ. Շիրվանզադէ	—	15
105	Վրէժ, Գիւի դը-Մոպասանի, թ. Լ. Մ. Ազատեանի.	—	5
106	Ակամայ մարդասպան, թարգմ. Տ. Յովհաննիսեանի	—	15
107	Մուֆլու. Ուիդի, թարգմ. Յ. Օհանեանի.	—	10
108	Անհրաժեշտ հաղագործ.	—	7
109	Նապաստակ, Սլիվիցկու թարգմ. օր. Ն. Ղուլիջանեան	—	7
110	Ծիրանի Մարիօն, Իւրիս Ծակինի, թարգ. Միքայէլեան	—	10
111	Ռոմէօ և Ջուլիէտ, Շէքսպիրի, թ. անգ. Յ. խան Մասէհեանի	—	60

(448) 16—15

1877 г. 1886 г. 1896 г. 1882 г.

ОТЪ ГЛАВНОЙ КОНТОРЫ ВИНО-ТОРГОВЛИ
ПОСТАВЩИКА
Двора Его ИМПЕРАТОРСКАГО Величества
ТОВАРИЩЕСТВА
ПЕТРА АРСЕНЬЕВИЧА СМИРНОВА,
У ЧУГУННАГО МОСТА, ВЪ МОСКВѢ.
за высокое достоинство столоваго очищеннаго вина, нѣжинской рябины, водокъ, наливокъ и ликеръ фирма удостоена на Всероссійской Промышленной и Художественной выставкѣ въ Нижнемъ-Новгородѣ 1896 г., четвертаго
ГОСУДАРСТВЕННАГО ГЕРБА.

Можно получать во всѣхъ вино-торговляхъ, ресторанахъ и гостинницахъ:
СТОЛОВОЕ ВИНО подъ № 40, № 32, № 20, № 31, и № 21. ПШЕНИЧНОЕ ВИНО № 20. НѢЖИНСКУЮ РЯБИНУ № 30, № 23, ЯГОДНЫЯ НАСТОЙКИ, НАЛИВКИ ЛИКЕРЪ, ГОРЬКІЯ ТРАВНЫЯ и ФРУКТОВЫЯ ВОДКИ, КАВКАЗСКІЙ, ВИНОГРАДНЫЙ КОНЬЯКЪ, РУССКІЯ и ИНОСТРАННЫЯ ВИНОГРАДНЫЯ ВИНА.

Прейсъ-Куранты высылаются немедленно
ОТДѢЛЕНІЯ НАХОДЯТСЯ: въ С.-Петербургѣ, на углу Мал. Морск. и Горохов. д. № 13—8. и въ Нижнемъ-Новгородѣ, на Нижнемъ Базарѣ, противъ Волжско-Камскаго Банка.
(М.) 10-5.

Тифисъ Доз. цензурою 8-го Ноября 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ